ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

28 փետրվարի երեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

29
(2695)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 161

2018 թվականի սեպտեմբերի 11-ին հրավիրված մամուլի ասուլիսի ընթացքում ՀՀ ՀՔԾ, ներկայումս Հակակոռուպցիոն կոմիտեի ղեկավար Սասուն Խաչատրյանը հրապարակավ հայտարարեց, որ 2008 թվականի մարտի 1-ին սպանված Տիգրան Աբգարյանի սպանությունը բացահայտված է, եւ շուտով բոլորը կիմանան այդ մասին: «Տիգրան Աբգարյանը սպանվել է այն ժամանակ, երբ արդեն իսկ մտցրել էր Քոչարյանն արտակարգ դրություն, սակայն որեւէ հրազենային վիրավորում ստացած զինծառայող չկար: Եվ մեր տարբերակը, որը հետեւյալն էր, որ Տիգրան Աբգարյանին հրազենային վիրավորում է հասցվել նրա համար, որպեսզի Ռոբերտ Քոչարյանի այդ խոսքերը, թե՝ «մենք արդեն ունենք զոհեր», հիմնավորվեն: Դա նախաքննությամբ հիմնավորվել է»: Անցել է մոտ 5 տարի, սակայն 2008 թվականի մարտի 1-ի օրը Երեւանի կենտրոնում սպանված 10 քաղաքացիների սպանությունները այդպես էլ չեն բացահայտվել: Նիկոլ Փաշինյանը մոտ 5 տարի է՝ զբաղեցնում է ՀՀ վարչապետի պաշտոնը, նշանակման օրվանից հայտարարում էր, որ «Մարտի 1»-ը բացահայտվելու է, սակայն 5 տարի անց 10 մարդկանց սպանությունները չեն բացահայտվել: Չկա որեւէ պատիժ որեւէ մեկի նկատմամբ, միայն փորձ արվեց Ռոբերտ Քոչարյանին եւ մի քանի թիմակիցների վրա մեղադրանքներ հարուցել, սակայն բոլորը հերթով կոտրվեցին, ու, կարելի է ասել, Նիկոլ Փաշինյանը մաքրագործեց Ռոբերտ Քոչարյանին՝ նրան վերջնականապես մաքրելով «Մարտի 1»-ի թեմայից: Փոխարենը Նիկոլ Փաշինյանի իշխանության օրոք որոշվել է մարտի 1-ին նվիրված հուշարձան տեղադրել Երեւանի քաղաքապետարանի հարակից հատվածում: Ստացվում է, որ Նիկոլ Փաշինյանը իշխանության եկավ, որպեսզի բացահայտի մարտի 1-ի ողբերգական օրը, սակայն հիմա բավարարվում է հուշարձան դնելով: Հիշեցնենք նաեւ, որ Լենա Նազարյանը մարտի 1-ի ողբերգության զոհերին փոխհատուցում տալու մասին շտապ նախագիծ ներկայացրեց, սակայն հիմա մոռացել է պահանջատիրությունը ու մի անգամ նույնիսկ չի հետաքրքրվել հրապարակավ՝ ինչու չբացահայտվեց «Մարտի 1»-ը, եւ ինչու Նիկոլ Փաշինյանը խաբեց բոլորիս:

ՔՊ խմբակցությունը, ԱԺ նստաշրջանի մեկնարկին ընդառաջ, երեկ փակ հանդիպում է արել ԱԺ-ում: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ քննարկումը բավականին կարճ է տեւել՝ մոտ 1 ժամ: Ինչպես մեր աղբյուրները հայտնեցին, պասիվ հանդիպում է եղել, արտառոց միջադեպեր չեն գրանցվել, նաեւ մասնակիցներն են քիչ եղել: ՔՊ-ականները հիմնականում պատրաստվել են այսօրվա ԱԺ նիստին, որոշել են քվեարկությունների հարցը, ով ինչ է խոսելու, ինչի վերաբերյալ է ելույթ ունենալու հիմնականում եւ այլն: Տեղեկացանք նաեւ, որ իշխանականները տրամադրված են այս նստաշրջանը հանգիստ «անցկացնել», սուր չքննադատել ընդդիմադիրներին: Թեեւ հերթական քառօրյայի օրակարգում 19 հարց է ընդգրկվել, սակայն իշխող ֆրակցիայի համար կարեւոր է անցկացնել հատկապես «Պետական գաղտնիքի մասին» օրենքը, ուստի որոշել են միաձայն կողմ քվեարկել նախագծին: Տեղեկացանք, որ ընդդիմությունն էլ պատրաստվում է այս նախագծի հետ կապված «թեժ» քննարկում այսօր ծավալել ԱԺ-ում եւ մանրամասն ներկայացնել դրա խնդրահարույց կողմերը: Այս առումով ակտիվ է լինելու հատկապես Արծվիկ Մինասյանը, որն այսօր ընդդիմության անունից ներկայացնելու է միասնական տեսակետ՝ տվյալ նախագծի վերաբերյալ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ իշխող ֆրակցիան երեկվա փակ նիստում քննարկել է նաեւ ՄԻՊ թեկնածուի հարցը, սակայն այդպես էլ վերջնական որոշման չի եկել, պատգամավորներից մի քանիսն իրենց թեկնածուների անուններն են տվել, սակայն որեւէ թեկնածուի շուրջ խմբակցությունը կոնսենսուսի չի եկել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ քաղաքական իշխանությունը ի սկզբանե ներքին որոշում է ունեցել՝ եւ դատավոր Զարուհի Նախշքարյանի, եւ դատավորների միության փոխնախագահ, դատավոր Արթուր Ստեփանյանի լիազորությունները դադարեցնելու մասով: «Ժողովուրդ» օրաթերթին տեղեկություններ հասան, որ ԲԴԽ նախագահ Կարեն Անդրեասյանը իր նեղ թիմի մոտ անկեղծացել է, թե նպատակ չունի Արթուր Ստեփանյանի լիազորությունները դադարեցնել: Մեզ հասած բացառիկ տեղեկությունների համաձայն՝ Կարեն Անդրեասյանն, իհարկե, ուղիղ խոսք չի տվել որեւէ բան Ստեփանյանի կողմնակիցներին, սակայն ինչպես նկատում ենք, նրա զանգ-նամակ-խնդրանքը տեղ է հասել: Երեկ Բարձրագույն դատական խորհուրդը դադարեցրեց Երեւան քաղաքի դատավոր Զարուհի Նախշքարյանի լիազորությունները, իսկ Դատավորների միության փոխնախագահ Արթուր Ստեփանյանի նկատմամբ հայտարարվեց նկատողություն. սա Ստեփանյանի երկրորդ նկատողությունն էր:

Ծանր կամ առանձնապես ծանր հանցանք առաջին անգամ կատարած անձը կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից: Այդպիսի կարգավորում է առաջարկում ՀՀ արդարադատության նախարարությունը: Մասնավորապես, առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում (քրեական պատասխանատվությունից ազատելը՝ գործուն զղջալու հիմքով) լրացնել 1.1 մասով եւ դրանով իսկ նախատեսել կարգավորում, որ այն դեպքերում, երբ անձի՝ առաջին անգամ կատարած հանցանքը դասվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի եւ այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Այստեղ ընդգծենք, որ ՀՀ քրեական օրենսգրքով ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը: Առանձնապես ծանր հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված է առավելագույն պատիժ՝ ազատազրկում տասը տարուց ավելի ժամկետով կամ ցմահ ազատազրկում: Հիմնավորման մեջ նշվում է, որ նախաքննական մարմինների առկա ծանրաբեռնվածության պայմաններում խիստ կարեւոր է նման իրավակարգավորումը, որն էապես նվազեցնում է ինչպես նախաքննական մարմինների, այնպես էլ դատարանների ծանրաբեռնվածությունը: Այսինքն՝ ստացվում է՝ դատարանները թեթեւացնելու համար ծանր հանցագործներին հնարավորություն են տալիս ազատվելու:

ՉԻ՛ԲԱՎԱՐԱՐՎԵԼՈՒ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԱԽՈՐԺԱԿԸ ԲԱՑՎՈՒՄ Է

Փետրվարի 23-ին, Արցախի նախագահի որոշմամբ, պետնախարարի պաշտոնից ազատվեց Ռուբեն Վարդանյանը: Արայիկ Հարությունյանը Վարդանյանին պաշտոնանկ անելու կոնկրետ պատճառաբանություն չի ներկայացրել՝ սահմանափակվելով հետեւյալ նախադասությամբ. «Մեր բոլորիս եւ պետության՝ բոլոր առումներով դիմադրողականությունը չսպառելու համար որոշում եմ կայացրել Ռուբեն Վարդանյանին ազատելու պետական նախարարի պաշտոնից»:

Արցախում ստեղծված ներքաղաքական իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է ադրբեջանագետ, պատմական գիտությունների թեկնածու Տաթեւիկ Հայրապետյանի հետ:

-Տիկին Հայրապետյան, Ռուբեն Վարդանյանի հեռանալուց հետո ի՞նչ նոր զարգացումներ են հնարավոր Արցախում:

-Կարծում եմ՝ Ռուբեն Վարդանյանի հեռացումը կապված է Մոսկվա-Բաքու բանակցություններով եւ պայմանավորվածություններով: Հավանաբար, Մոսկվան սա փորձում է ներկայացնել որպես զիջում իր կողմից Բաքվին: Արցախում կանխատեսվում էր երկու հավանական սցենար. քանի որ ադրբեջանցիների «ակցիան» չի արդարացնում, Ադրբեջանը գնալու էր կա՛մ լոկալ ռազմական սցենարով, կա՛մ էլ ներքաղաքական ինտրիգներ հրահրելու սցենարով: Ըստ էության, ընտրվեց երկրորդ ճանապարհը՝ ներքաղաքական ինտրիգներ հրահրելու, եւ այդ հարցում, բնականաբար, նրանց օժանդակեց Թուրքիան: Եթե դատենք նաեւ ռուս գործիչների հայտարարություններից, նրանք փորձում էին Լաչինի միջանցքում իրենց հեղինակազրկվելը փրկել՝ ճնշումներ գործադրելով Արցախի իշխանությունների վրա եւ նրանցից զիջումներ կորզելով, քանի որ չէին կարողանում հարկադրել Ադրբեջանին կամ էլ չեն ցանկանում: Ես ավելի հակված եմ մտածել, որ չեն կարողանում, բայց վստահ չեմ: Ամեն դեպքում, Ռուբեն Վարդանյանի՝ Արցախում մնալու որոշումը ողջունելի է, իսկապես. եթե մարդը նպատակ է դրել, ուրեմն պաշտոնն ընդամենը միջոց է:

-Ալիեւն ասում էր, որ չի պատրաստվում բանակցել Ռուբեն Վարդանյանի հետ, որին համարում էր Ռուսաստանի մարդ: Արդյոք Վարդանյանի հեռանալուց հետո Ադրբեջանը կսկսի՞ բանակցել Լաչինի միջանցքի մասով, թե՞ նոր պատճառաբանություն կբերի բանակցություններից հրաժարվելու համար:

-Բաքուն սրանով չի բավարարվելու, քանի որ Ադրբեջանի ախորժակը բացվում է զիջումներից: Ավելին՝ ադրբեջանական քարոզչադաշտը պատգամավորների եւ իշխանական տարբեր փորձագետների մակարդակով պնդում է, որ հաջորդը պետք է հասնեն հսկիչ անձնագրային կետի տեղադրմանը: Այդ առումով ծանր են տարել Արարատ Միրզոյանի վերջին հայտարարությունը, որ նման բան չի լինելու, բայց ադրբեջանական կողմը հայտարարում է, որ իրենք պետք է փորձեն հասնել դրան ամեն գնով մինչեւ 2025թ.-ը: Ալիեւը մտադիր է մինչեւ 2025թ.-ը ազատվել այնտեղ ապրող հայերից. նա 1,5 տարի ժամանակ է ինքն իրեն տվել այս խնդիրը լուծելու համար, փորձելու է այդ ճանապարհին առկա խոչընդոտները վերացնել, որպեսզի հետո էլ հասնի ռուս խաղաղապահների դուրսբերմանը: Ես կարծում եմ՝ այս սցենարով է գնալու Ալիեւը. եթե որեւէ մեկը չկանխի այս պլանները, ապա մենք աղետալի հետեւանքներ կունենանք Արցախում եւ դրանից անմիջապես հետո՝ Հայաստանում: Ամեն դեպքում, շատ բան կախված է նաեւ Լավրովի առաջիկա այցից Բաքու. հիմնական բանակցություններն այս հարթակում են գնում:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԵ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԴԻՄՈՒՄ

ՈՐՏԵ՞Ղ ԵՆ ՄՆԱԼՈՒ ԱՆՕԹԵՒԱՆՆԵՐԸ

Ամ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը սոցցանցի իր էջում գրում է. «ՊՆ նախկին շենքի բնակիչները շարունակում են անօթեւան մնալ: Որքան էլ ՀՀ ՊԵԿ-ը պնդում է, որ տարածքը պետական է, եւ մարդիկ պետք է լքեն այն, ամեն դեպքում, պետությունը պարտավոր է նախ նրանց աղահովել պատշաճ կացարանով եւ միայն նոր հարկադրաբար հեռացնել տարածքից:

Նախ՝ տեղեկացնեմ, որ իմ հանձնարարությամբ հանձնաժողովի փորձագետները ոստիկանական ողջ գործողությունների ընթացքում եղել են ՊՆ նախկին վարչական համալիրի տարածքում, արձանագրել իրավիճակը:

Արդեն գրեթե երկու շաբաթ է՝ ՀՀ ՊՆ նախկին շենքում բնակվող անձինք ընտանիքներով, որոնց մեջ են անչափահաս երեխաներ, ձմռան ցրտին բնակվում են վրանային պայմաններում: Համալիրի տարածքում բնակվող անձանց շարքում են գործող եւ նախկին զինվորականներ, արցախյան պատերազմի մասնակիցներ, ծերեր, կանայք, մանկահասակ երեխաներ: Արդեն իսկ առկա են դեպքեր, երբ ծերերի եւ անչափահասների շրջանում նկատվում են հիվանդացության դեպքեր:

Խնդրի վերաբերյալ դիմել եմ ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարին՝ պահանջելով հստակ պարզաբանում.

- ի՞նչ ժամկետներում է նախատեսվում լուծել ՊՆ նախկին շենքի բնակիչների կացարանի հարցը,
- որտե՞ղ են նախատեսում տեղափոխել անօթեւան դարձած քաղաքացիներին,
- արդյոք գործո՞ւմ է նախարարության կողմից նշած վարձավճարի փոխհատուցման ծրագիրը. եթե այո, ապա ի՞նչ ժամկետներում եւ ի՞նչ պայմաններով:

Դիմել եմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ խնդրելով հնարավորություն ստեղծել ՀՀ ՊՆ նախկին շենքի տարածքում բնակվող անձանց վերադառնալու վարչական համալիրի տարածքում գտնվող իրենց նախկին բնակության վայր մինչեւ իրավասու մարմնի կողմից վերջիններիս կեցավայրի հարցի լուծումը:

Քաղաքացիների ահազանգերի հետքերով գրություն եմ ուղարկել ՀՀ ներքին գործերի նախարարին, փոխանցել վերջիններիս մտահոգությունն առ այն, որ իրենց՝ սեփականության իրավունքով պատկանող գույքը ոչնչացվել կամ անհայտացել է, իրենց նկատմամբ դրսեւորվել է անհարգալից վերաբերմունք:

Նախարարից պահանջել եմ կատարել անհրաժեշտ քայլեր՝ հակահիրավական արարքներ կատարած ոստիկանների նկատմամբ պատասխանատվության միջոցներ կիրառելու համար՝ արդյունքների մասին տեղեկացնելով ինձ:

Ակնկալել եմ նաեւ պարզաբանում, թե ինչ իրավաչափ պահանջով է պայմանավորված, որ ՀՀ ոստիկանության աշխատակիցները արգելում են տարածքում երկրորդ վրան տեղակայելը, իսկ եթե նման պահանջ չկա, կամ այն իրավաչափ չէ, խնդրել եմ արգելք չհանդիսանալ քաղաքացիների կողմից տարածքում վրաններ տեղակայելուն մինչեւ իրավասու մարմինների կողմից քաղաքացիների կացարանի հարցի լուծումը:

Հետեւողական եմ լինելու հարցի համապարփակ կարգավորմանը. մարդկանց իրավունքները չպետք է խախտվեն»:

ՍԽԱԼ PR

Միջազգային իրավական հարցերով մշտական ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանն իր հանրային խոսքում մշտապես շեշտել է Հաագայի միջազգային դատարան դիմելու կարեւորությունը, Նիկոլ Փաշինյանի PR թիմն օրեր շարունակ ոգեւորված տարածում էր դատական լսումների տեղեկությունները՝ հասարակությանը կերակրելով, թե, ահա, միջազգային դատարանում քննվում է հայերի համար կարեւորագույն հարցը, եւ վճռից հետո Լաչինի միջանցքը կբացվի եւ այլն: Կյանքը ցույց տվեց, որ ինչպես մյուս բոլոր ոլորտներում, այս դեպքում էլ Նիկոլ Փաշինյանի իշխանությունը քամի տատանելով էր զբաղված: Նրանք ցույց են տալիս, թե գործում են, բայց գործում են իրականում զերո արդյունավետությամբ: Ինչո՞ւ ենք այդպես ասում. երեկ նույն Եղիշե Կիրակոսյանը հայտարարեց. «Ցավոք, միջազգային իրավունքում չունենք այնպիսի ինստիտուտ, որը կզբաղվի որոշումների հարկադրաբար կատարման ուղղությամբ հարցերով: ՄԱԿ-ի դատարանի որոշումը ենթակա է պարտադիր կատարման կողմերի համար, բայց իրականացման համար ժամկետ չկա նշված»:

Ազնիվ կլիներ, որ Կիրակոսյանն ու իր պրոֆեսիոնալների թիմը հասարակության մոտ անիմաստ սպասումներ չառաջացնելու համար նախապես հայտարարեին, որ ինչ վճիռ էլ կայացնելու լինի ՄԱԿ-ի միջազգային դատարանը, չի կատարվելու այն: Դա պետք է ասեին՝ աշխարհի շատ երկրների նախադեպերը հաշվի առնելով: Ինչ խոսք, օրինակներ շատ կան աշխարհում, որ կայացվել են վճիռներ կամ միջանկյալ միջոցներ, որոնք չեն կատարվել, բայց ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջազգային դատարանը կարողանում է արդյունավետ աշխատել միայն այն դեպքում, երբ այն պետությունը, որի օգտին կայացվում է որոշումը, ի վիճակի է միջազգային հանրության միջոցով իրագործել այդ վճռի կամ միջանկյալ միջոցի կիրառումը: Կյանքը ցույց տվեց, որ որեւէ կերպ ՀՀ կառավարությունը չի կարողանում միջազգային ճնշում կազմակերպել, որպեսզի կատարվի վճիռը: Միայն Եվրամիությունը եւ Ֆրանսիան են հայտարարել, որ անհրաժեշտ է կատարել Հաագայի դատարանի որոշումը, սակայն դեռ անօգուտ. 81 օր է՝ փակ է Արցախն աշխարհին կապող միակ ավտոճանապարհը:

ՎԱՐՉԱՏՐՈՒՄ՝ ՌԻՍԿԻ ՀԱՄԱՐ

«Պետական պաշտոններ եւ պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ են կատարվելու: ArmLur.am-ը տեղեկացավ, որ օրենքի ընդունման արդյունքում նախատեսվում է դատախազներին վճարել ամսական հավելում՝ պաշտոնային դրույքաչափի իննսուներկու տոկոսի չափով:

Հիմնավորման մեջ նշվում է, թե առաջարկի հիմքում դատախազների աշխատանքի ռիսկայնությունն է, ինչպես նաեւ այդ աշխատանքն առավել գրավիչ դարձնելու նպատակը: Նշվել է, որ հավելումը դատախազները կստանան ոչ հավասար չափով, յուրաքանչյուր դատախազ հավելում կստանա՝ ըստ իր դրույքաչափի:

Նշենք, որ այս նախագիծը քննարկվելու է վաղը մեկնարկելիք նստաշրջանի օրակարգում:

ԵՐԿԱՐԱՏԵՒ ԳՈՐԾՈՒՂՈՒՄ՝ ԱՄՆ

Սփյուռքի գործերի գլխավոր հանձնակատար Ջարեհ Սինանյանը փետրվարի 17-ից գտնվում է Ամերիկայի Միացյալ նահանգներում: Armlur.am-ը տեղեկացավ, որ նա մինչեւ մարտի 2-ը կլինի այնտեղ: Կես ամիս գործուղման ընթացքում նա պետք է լիներ Տեխաս նահանգ, Դալասում փետրվարի 17-20-ը, Տեխաս նահանգ, Հյուստոնում՝ փետրվարի 20-21-ը, Փենսիլվանիա նահանգ, Ֆիլադելֆիայում՝ փետրվարի 21-23-ը, Մասաչուսեթս նահանգ, Բոստոնում՝ փետրվարի 23-25-ը, Նյու Յորք նահանգ, Նյու Յորքում՝ փետրվարի 25-28-ը, Վաշինգտոնում՝ փետրվարի 28-ից մինչեւ մարտի 2-ը ներառյալ: Հիմնավորման մեջ նշվում է, թե գործուղման նպատակը պետական եւ համայնքային կառույցների, երիտասարդական, մշակութային, գիտական, կրոնական կազմակերպությունների, բժշկական ասոցիացիաների ներկայացուցիչների հետ հանդիպումներ ունենալու եւ համագործակցության համար հետագա ուղիները քննարկելն է: Տեղեկացանք նաեւ, որ Ջարեհ Ջոն Սինանյանի՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներ գործուղման հետ կապված ծախսերը կատարվելու են Հայաստանի Հանրապետության՝ 2023 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմի «Հայաստան-Սփյուռք գործակցության» ծրագրի «Աշխատանք՝ սփյուռքի համայնքներում» միջոցառման համար նախատեսված միջոցների հաշվին:

ԱԺ–ՈՒՄ ԹԵԺ Է ԼԻՆԵԼՈՒ

Այսօր՝ փետրվարի 28-ին, կմեկնարկի Ազգային ժողովի հերթական նստաշրջանը: Նստաշրջանի հիմնական օրակարգում ներառված է 7 հարց, իսկ լրացուցիչ հարցերն էլ 8-ն են: ԱԺ նիստի օրակարգում ընդգրկված է նաեւ «Պետական գաղտնիքի մասին» ՀՀ օրենքների նախագծերի փաթեթը: ArmLur.am-ը տեղեկացավ, որ ընդդիմությունը եւս մասնակցելու է այսօր մեկնարկելիք ԱԺ նիստերին, ավելին՝ պատրաստվում է թեժ քննարկում սկսել «Պետական գաղտնիքի մասին» օրենքի վերաբերյալ: Նշենք, որ սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության ապահովման նպատակով տեղեկությունները պետական գաղտնիքի շարքին դասելու, գաղտնագրելու, պետական գաղտնիքը պահպանելու, պաշտպանելու, օգտագործելու, գաղտնազերծելու կամ ոչնչացնելու գործընթացների հետ կապված հարաբերությունները, սահմանում է պետական գաղտնիք պարունակող տեղեկությունների հասկացությունը, գաղտնիության աստիճանները, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվող հարաբերություններում պետական եւ տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, իրավաբանական անձանց, ֆիզիկական անձանց լիազորությունները, պետական գաղտնիք պարունակող տեղեկություններին առնչվելու թույլտվություն ունեցող անձանց պարտականությունները, նրանց աշխատանքի համար սահմանված պայմանները եւ սահմանափակումները, ինչպես նաեւ սահմանափակ տարածման ծառայողական տեղեկության հետ կապված հարաբերությունները:

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՆՑԱՆՔ ԳՈՐԾԻ՛Ր, ԸՆԴՈՒՆԻ՛Ր, ԱԶԱՏՎԻ՛Ր

ՀՀ արդարադատության նախարարությունը հանդես է եկել օրենսդրական նախաձեռնությամբ եւ առաջարկում է փոփոխություններ կատարել ՀՀ քրեական օրենսգրքում:

Նախագծով առաջարկվում է ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում (քրեական պատասխանատվությունից ազատելը՝ գործուն զղջալու հիմքով) լրացնել 1.1 մասով եւ դրանով իսկ նախատեսել կարգավորում, որ այն դեպքերում, երբ անձի՝ առաջին անգամ կատարած հանցանքը դասվում է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների շարքին, ապա հանցավորի դերի, հանցանքը կատարելիս ու դրանից հետո նրա վարքագծի եւ այլ հանգամանքների հետ կապված բացառիկ հանգամանքների առկայության դեպքում նա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը: Բացառիկ կարող են ճանաչվել ինչպես առանձին մեղմացնող հանգամանքները, այնպես էլ այդ հանգամանքների համակցությունը:

Նախ՝ նշենք, որ այժմ ՀՀ քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածը (քրեական պատասխանատվությունից ազատելը՝ գործուն զղջալու հիմքով) սահմանում է.

«1. Եթե անձն առաջին անգամ է հանցանք կատարել, ապա կարող է ազատվել քրեական պատասխանատվությունից, եթե նրա կատարած արարքը ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք է, եւ նա համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ, չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը, վնաս պատճառած լինելու դեպքում հատուցել կամ այլ կերպ հարթել է հանցագործությամբ պատճառված վնասը»:

Նախկինում, սույն հոդվածով նախատեսված հիմքով, քրեական պատասխանատվությունից ազատված անձը չի կարող նույն հիմքով կրկին ազատվել քրեական պատասխանատվությունից:

Այսպիսով, Քրեական օրենսգիրքը գործուն զղջալու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու համար սահմանում է մի շարք նախապայմաններ: Դրանք են՝

- անձը հանցանքը կատարել է առաջին անգամ,
- արարքը դասվում է ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանքների շարքին,
- անձը համագործակցում է քրեական հետապնդման մարմինների հետ,
- չի վիճարկում իրեն մեղսագրվող արարքը,
- վնաս պատճառած լինելու դեպքում հատուցում է պատճառված վնասը,
- վնաս պատճառած լինելու դեպքում այլ կերպ հարթում է պատճառված վնասը:

Հիմնավորման մեջ նշվում է, որ նախաքննական մարմինների առկա ծանրաբեռնվածության պայմաններում խիստ կարեւոր է նման իրավակարգավորումը, որն էապես նվազեցնում է ինչպես նախաքննական մարմինների, այնպես էլ դատարանների ծանրաբեռնվածությունը:

Այսպիսով, նախագծով առաջարկվում է Քրեական օրենսգրքի 81-րդ հոդվածում կատարել համապատասխան լրացում եւ կարգավորում՝ առ այն, որ գործուն զղջալու ինստիտուտը որոշակի պայմանների առկայության պարագայում կարող է կիրառվել նաեւ ծանր եւ առանձնապես ծանր հանցագործությունների դեպքերով:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՄԻԵԴ 6 ՎՃԻՌ ԿԱ

Միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանն երեկ տեղեկացրել է, որ Ադրբեջանի դեմ կա ՄԻԵԴ-ի 6 վճիռ, որոնք վերաբերում են հայկական հարցերին:

«Սրանցից առաջինը Գուրգեն Մարգարյանի կացնահարման դեպքով վճիռն է, մնացած վճիռները վերաբերում են քաղաքացիական անձանց, որոնք կամ սպանվել են, կամ խոշտանգվել են, ապա մահացել են, կամ խեղվել են ադրբեջանական վերահսկողության տակ անցնելուց հետո լրիվ խաղաղ պայմաններում: Այս վճիռների կատարման ուղղությամբ քայլեր ձեռնարկվում են թե՛ ԱԳՆ-ի կողմից, թե՛ մեր կողմից՝ սերտորեն աշխատելով Ստրասբուրգում մեր ներկայացուցչության հետ: Մենք անընդհատ փորձում ենք այս հարցերը բարձրացնել Նախարարների կոմիտեի օրակարգում»,- ասել է նա:

Կիրակոսյանը նաեւ նշել է, թե Ադրբեջանի կողմից հաստատված 33 գերիների դեմ ապօրինի դատավարությունների մասով որոշ տղաների հետ կապված դատարանի՝ միջանկյալ միջոցներ կիրառելու որոշումների ժամկետները լրացել են, սակայն նրանք շարունակում են բանտում պահվել. «Իրավական գործիքներով մաքսիմալ հնարավոր բոլոր ջանքերն արվել են: Ցավոք, այս պահին լրացուցիչ որեւէ անելիք չունենք այս մասով. եթե նոր փաստեր ենք գտնում, ներկայացնում ենք դատարանին»,- տեղեկացրել է Կիրակոսյանը:

ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԺՆԵՎՈՒՄ

Երեկ Ժնեւում կայացել են Իրանի ԱԳ նախարար Հոսեյն Ամիրաբդոլլահյանի եւ Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանի հանդիպումը եւ բանակցությունները:

Ժնեւում Մարդու իրավունքների խորհրդի 52-րդ հերթական նստաշրջանի շրջանակում կայացած հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող հարցեր. փոխանցում է Irna գործակալությունը:

Հաղորդվում է, որ Ամիրաբդոլլահյանը Ժնեւում իր այցի ընթացքում կհանդիպի մի շարք միջազգային այլ գործիչների հետ եւս:

Ավելի վաղ հայտնել էինք, որ փետրվարի 27-28-ը ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն աշխատանքային այցով կգտնվի Ժնեւում՝ մասնակցելու ՄԱԿ-ի Մարդու իրավունքների խորհրդի 52-րդ նստաշրջանի բարձրաստիճան նիստին:

ԱՐՁԱԿՈՒՐԴ ԿՄԵԿՆԻ

Նիկոլ Փաշինյանի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարար Վահան Քերոբյանն արձակուրդ կմեկնի: Նախարարը արձակուրդում կլինի մարտի 6-9-ը ներառյալ:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ արձակուրդում գտնվելու ընթացքում վերջինիս կփոխարինի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Արման Խոջոյանը:

ԶԳՈՒՇԱՑՈՒՄ

20 ՄԵՂԱԴՐՅԱԼՆԵՐԻՑ 12-Ը ԿԱԼԱՆԱՎՈՐՎԵԼ ԵՆ

Վերջին շրջանում, հանրապետության տարածքում պարեկային ծառայության ներդրման գործընթացին զուգահեռ, ավելի հաճախակի են դարձել իրենց ծառայողական պարտականությունները կատարող պարեկային ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելու, նրանց ծառայողական գործողություններին միջամտելու, առանձին դեպքերում ընդհուպ նրանց նկատմամբ բռնություններ գործադրելու դեպքերը:

ՀՀ քննչական կոմիտեում կատարված՝ ՀՀ ՔԿ ստորաբաժանումներում ՀՀ քրեական օրենսգրքի 452-րդ հոդվածի (պաշտոնատար անձի օրինական ծառայողական կամ քաղաքական գործունեությանը միջամտելը) հատկանիշներով նախաձեռնված եւ քննվող քրեական վարույթների ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 2023թ. փետրվարի 5-ի դրությամբ նշված հոդվածի հատկանիշներով քննվող 44 քրեական վարույթներից 27-ը նախաձեռնվել են ՀՀ ՆԳՆ պարեկային ծառայողների ծառայողական գործունեությանը միջամտելու փաստերի առթիվ: Ընդ որում՝ միայն 2023թ. հունվարի 1-ից մինչեւ փետրվարի 5-ն ընկած ժամանակահատվածում նախաձեռնվել է այդպիսի 9 քրեական վարույթ:

Նշված 9 վարույթներից 2-ը նախաձեռնվել են պարեկների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու նպատակով նրանց կամ նրանց մերձավորի նկատմամբ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի (ՀՀ քր. օր. 452-րդ հոդվածի 1-ին մաս), 3-ը՝ վերջիններիս գույքը վնասելու (ՀՀ քր. օր. 452-րդ հոդվածի 2-րդ մաս), 3-ը՝նշված անձանց նկատմամբ բռնություն գործադրելու (նույն հոդվածի 3-րդ մաս), իսկ 1-ը՝ սպառնալիքի եւ բռնության գործադրման համակցության (նույն հոդվածի 1-ին եւ 3-րդ մաս) հատկանիշներով:

2023թ. ընթացքում քննվող եւ մեղադրական եզրակացությամբ ավարտված քրեական վարույթների շրջանակում 29 պարեկային ծառայող ճանաչվել է տուժող, որոնցից 6-ը՝ բռնություն գործադրելու սպառնալիքի, իսկ 23-ը՝ բռնություն գործադրելու հետեւանքով:

Քննվող, մեղադրական եզրակացությամբ ավարտված վարույթներով 20 անձի նկատմամբ հարուցվել է քրեական հետապնդում, որից 5-ը՝ բռնություն գործադրելու, գույքը ոչնչացնելու կամ վնասելու սպառնալիքի, իսկ 15-ը՝ բռնություն գործադրելու համար:

Ընդ որում, կառավարման կարգի դեմ ուղղված այս հանցագործությունների մի մասը կատարվել է այլ բնույթի հանցավոր գործողությունների համակցությամբ: Մասնավորապես՝ 2 դեպքում դրանք ուղեկցվել են խուլիգանական արարքներով, 1 դեպքում՝ ապօրինի ծառահատման կամ փայտանյութի տեղափոխման, 1-ը՝ ուրիշի գույքը դիտավորությամբ վնասելու:

Պարեկների օրինական ծառայողական գործունեությանը միջամտելու արգելված արարքներ կատարելու համար ընդհանուր 20 մեղադրյալներից 12-ի նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանավորումը, 4-ի նկատմամբ կիրառվել է բացակայելու արգելքը, 2-ի նկատմամբ՝գրավը, 1-ի նկատմամբ՝գրավ եւ բացակայելու արգելք, 1-ի նկատմամբ՝ գրավ եւ տնային կալանք:

Նշված ժամանակահատվածում մեղադրական եզրակացությամբ ավարտվել է 1 քրեական վարույթ 1 անձի նկատմամբ:

Ելնելով վերոնշյալից՝ ՀՀ քննչական կոմիտեն հարկ է համարում տեղեկացնել, որ ծառայողական պարտականությունները կատարող համապատասխան ծառայողների, այդ թվում՝ նաեւ պարեկային ծառայողների օրինական պահանջներին չենթարկվելը, նրանց ծառայողական գործողություններին որեւէ ձեւով միջամտելը, մասնավորապես՝ նրանց, նրանց մերձավորների նկատմամբ սպառնալիքներ հնչեցնելը, նրանց գույքը ոչնչացնելը կամ նրանց նկատմամբ բռնություններ գործադրելը քրեորեն հետապնդելի արարքներ են, որոնց համար նախատեսված է պատիժ՝ 5-ից մինչեւ 10 տարի ժամկետով ազատազրկում:

Հասարակական կարգը պահպանելու, Հայաստանում պարեկային ծառայության ներդրման գործընթացին չխոչընդոտելու նպատակով ինչպես երթեւեկության մասնակիցներին, այնպես էլ բոլոր քաղաքացիներին հորդորում ենք ձեռնպահ մնալ իրենց ծառայողական պարտականությունները կատարող պարեկային ծառայողների նկատմամբ որեւէ հանցավոր ոտնձգություն կատարելուց եւ դրսեւորել իրավահպատակ վարքագիծ:

Ծառայողական պարտականությունները կատարող պաշտոնատար անձանց գործողություններից դժգոհություն, անհամաձայնություն ունենալու պարագայում, ինքնաբուխ հակաօրինական գործողություններ կատարելու փոխարեն, անհրաժեշտ է դիմել բացառապես իրավական միջոցների՝ օգտվելով պաշտոնատար անձանց առերեւույթ ոչ իրավաչափ գործողությունները վարչական կամ քրեաիրավական ընթացակարգերով վիճարկելու իրավունքից: ՀՀ քննչական կոմիտեն զգուշացնում է, որ հանցավոր վարքագիծ դրսեւորելու բոլոր դեպքերը մանրակրկիտ եւ անաչառ քննությամբ բացահայտվելու են, իսկ հանցավոր արարքը հիմնավորող բավարար փաստական տվյալների համակցություն ձեռք բերելու դեպքում համաչափ քրեաիրավական հետեւանքները լինելու են անխուսափելի:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՅՏՆԱԲԵՐԵԼ ԵՆ ԱԴԱՄԱՆԴՆԵՐ

ՀՀ ՊԵԿ Արեւմտյան մաքսատուն-վարչությունում օրերս հայտնաբերվել է մաքսային կանոնների խախտման նոր դեպք: Ստամբուլ-Երեւան չվերթով ՀՀ ժամանած քաղաքացին ՊԵԿ Արեւմտյան մաքսատուն-վարչության ուղեւորների մաքսային հսկողության բաժնում հատել է «Կանաչ ուղու» մուտքի գիծը, որը համարվում է մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների բացակայության մասին ֆիզիկական անձի կողմից արված հայտարարություն:

Մաքսային հայտարարագրման ենթակա ապրանքների տեղափոխման վերաբերյալ հիմնավոր կասկածներ ունենալով՝ քաղաքացու կողմից «Կանաչ ուղի» մաքսային հսկողության գոտու ելքի գիծը հատելուց հետո մաքսային ծառայողները քաղաքացուն ուղեկցել են «Կարմիր ուղի» հսկողության գոտի: Տվյալ քաղաքացին ենթարկվել է մաքսային հսկողության. նրա գրպաններից հայտնաբերվել է 6 պոլիէթիլենային փաթեթվածք՝ լցված ադամանդանման քարերով՝ ընդհանուր 14 գրամ քաշով: Նրա մոտ առկա է եղել նաեւ 1 փաթեթ՝ լցված ադամանդանման քարերով՝ ընդհանուր 29 գրամ քաշով, եւ 3 դատարկ այլ փաթեթ: Հայտնաբերված ադամանդանման քարերի ընդահանուր քաշը կազմել է շուրջ 43 գրամ:

Կազմվել է մաքսային կանոնների խախտման վերաբերյալ արձանագրություն՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 316-րդ հոդվածով: Վարչական վարույթի հետագա ընթացքն ապահովելու համար գործի նյութերն ուղարկվել են ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչություն:

ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԴԱԴԱՐԵՑՎԵՑԻՆ

Բարձրագույն դատական խորհուրդը երեկ՝ փետրվարի 27-ին, բավարարեց արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի միջնորդությունը եւ դադարեցրեց Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Զարուհի Նախշքարյանի լիազորությունները՝ էական կարգապահական խախտման հիմքով:

Որոշումն ընթերցեց ԲԴԽ անդամ Նաիրա Հովսեփյանը:

Հիշեցնենք, որ Զարուհի Նախշքարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու միջնորդությունը ներկայացրել է Արդարադատության նախարարությունը: Միջնորդության հիմքը դատավորի հրապարակային խոսքն է, որով նա իր վերաբերմունքն է արտահայտել դատավոր Աննա Փիլոսյանի վերաբերյալ ԲԴԽ-ի կայացրած որոշման առնչությամբ: Ըստ արդարադատության նախարարի՝ նա հրապարակայնորեն կասկածի տակ է առել դատավոր Փիլոսյանի վերաբերյալ ԲԴԽ դատական ակտը:

ArmLur.am-ը գրել էր՝ ԲԴԽ-ն այս անգամ ամեն քայլի կգնա դատավորի լիազորությունները դադարեցնելու համար:

ԼՈՒՐԵՐ

ԴԱՆԱԿԱՀԱՐԵԼ Է ՄԵՆԵՋԵՐԻՆ

Փետրվարի 26-ի կեսգիշերին մոտ 1-ին համալսարանական հիվանդանոցից ոստիկանության Կենտրոնական բաժին հաղորդում էր ստացվել, որ կրծքավանդակի կտրած-ծակած վերքով բուժօգնության է դիմել 36-ամյա մի երեւանցի: Կենտրոնական բաժնից քրեական հետախույզներ մեկնեցին հիվանդանոց. այս մասին տեղեկանում ենք ՀՀ ոստիկանության պաշտոնական կայքից:

Ձեռնարկված օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նրանք պարզեցին, որ Հյուսիսային պողոտայի ժամանցի վայրերից մեկում միջադեպ էր եղել:

19-ամյա մի երիտասարդ ակումբում ատրճանակից կրակել էր, ակումբի մենեջերն էլ միջամտել էր: Վեճ էր սկսվել: Այդ ընթացքում էլ երիտասարդը դանակով խփել էր մենեջերին: Ժամեր անց երիտասարդը հայտնաբերվեց ու ձերբակալվեց: Նրա մոտ ատրճանակ ու ծալովի դանակ հայտնաբերվեցին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ: Երիտասարդը եւ դեպքի առթիվ կազմված փաստաթղթերը ներկայացվել են տարածքային քննչական բաժին: Հանգամանքները քննությամբ պարզվում են:

ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՆԵՐՄՈՒԾՈՒՄ

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն հայտնում է, որ իրեն վերապահված լիազորությունների իրականացման շրջանակում բացահայտվել են մաքսային կանոնների խախտումների նոր դեպքեր:

Մասնավորապես, ՀՀ ԱԱԾ կողմից դեկտեմբերի 17-ին՝ մաքսային հսկողությունից թաքցնելու եղանակով մանդարինի անվան տակ հագուստի ներմուծման դեպքի բացահայտումից հետո, ՀՀ ՊԵԿ կողմից կատարված ուսումնասիրությունների եւ հարցումների միջոցով պարզվել է, որ նույն կազմակերպությունների կողմից 2022թ. հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում նույն եղանակով տարբեր մրգերի եւ բանջարեղենի անվան տակ ՀՀ է ներմուծվել հագուստ՝21 տարբեր դեպքերով, ընդհանուր առմամբ՝ 210 տոննա քաշով:

Նշվածի վերաբերյալ փաստաթղթերը կփոխանցվեն վարույթն իրականացնող մարմնին քրեական վարույթի շրջանակում հետագա ընթացքն ապահովելու նպատակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ փետրվարի 24-ից 27-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 113 դեպք, որոնցից 4-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԷԺԱՆ ԳՆՈՎ ԾԱԽԵԼ ԵՆ

Անցած տարվա աշնանը Իջեւան խոշորացված համայնքի սահմանամերձ Բերքաբեր գյուղում աճեցված կորոլյոկի (արքայանարնջի) բերքի իրացման խնդիր կար: Բերքաբերում մոտ 50 տոննա կորոլյոկի բերք կար, որը չէր իրացվում: Բերքաբերի վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանը հայտնեց, որ Բերքաբերի բնակիչները թեեւ դժվարությամբ, սակայն բերքը իրացրել են: Վարչական ղեկավարն ասաց, որ գյուղացիները ստիպված չեն եղել չիրացված կորոլյոկից տնական եղանակով օղի թորել: Բերքաբերում առկա է շուրջ 20 հեկտար կորոլյոկի այգի, կան նաեւ նորատունկ այգիներ, որոնք դեռեւս բերք չեն տալիս: Սահմանամերձ Բերքաբերում կյանքը բնականոն հունով է ընթանում: Գյուղի միջնակարգ դպրոցում սովորում է 65 աշակերտ. այդ թիվը, նախորդ տարիների համեմատ, մի քիչ ավելի է: Իջեւան համայնքի բյուջեի եւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի համաֆինանսավորմամբ՝ Բերքաբերում գիշերային լուսավորության ցանց է կառուցվել, եւ այժմ գիշերները ողջ գյուղը լուսավորվում է: Ավելի քան 30 տարվա ընդմիջումից հետո Բերքաբերին կից Ջողազի ջրամբարից ոռոգման ջրագիծ է կառուցվել, այդ ջրագծով պոմպի միջոցով կոռոգվի Բերքաբերի 80, նաեւ՝հարեւան Սարիգյուղի 40 հեկտար տարածքները: Բերքաբեր գյուղն ունի 760 հեկտար տարածք, որը, գտնվելով փաստացի հայ-ադրբեջանական սահման դարձած Ջողազի ջրամբարի ձախ ափին, արդեն 30 տարի գտնվում է ադրբեջանական զինուժի վերահսկողության տակ: Բերքաբերում առկա է խմելու ջրի խնդիր: Փաստացի 400 բնակիչ ունեցող բնակավայրը խմելու ջուր է ստանում Աճարկուտ-Բերքաբեր խմելու ինքնահոս ջրագծով, որը վերանորոգվել է, սակայն անտառում կան հատվածներ, որոնք կարիք ունեն նորոգման: Վարչական ղեկավար Տիգրան Հարությունյանն ասաց, որ շուրջօրյա խմելու ջրամատակարարում է կատարվում, սակայն ջրի ծորակները տեղադրված են ոչ թե բնակիչների տների բակերում, այլ թաղերում, որտեղից էլ գյուղացիները ջուր են կրում իրենց առանձնատներ:

ԴԵՊԻ ՌՈՒՍԱՍՏԱՆ ԱՐՏԱԳԱՂԹ ԿԱ

Տավուշի մարզի սահմանամերձ գյուղերից թեեւ ոչ մեծ չափով, սակայն արտագաղթ է կատարվում դեպի Ռուսաստանի Դաշնություն: Դա ամեն տարվա գարնանը Ռուսաստան արտագնա աշխատանքի մեկնելը չէ, երբ խոր աշնանը վերադառնում են հայրենի բնակավայր: Ռուսաստան տեղափոխվում են ընտանիքներով, փոքրահասակ երեխաներով: Փաստացի պատերազմի մեջ գտնվող Ռուսաստանն արտագաղթողներին ավելի հրապարակային ու հեռանկարանային է թվում, քան Հայաստանը: Տավուշի նախկին մարզպետ Հայկ Չոբանյանը 2019թ. մայիսի 17-ին որպես մարզպետ պաշտոնավարման 100 օրվա կապակցությամբ Տավուշի մարզի Ենոքավան գյուղում ունեցած մամուլի ասուլիսում հայտարարեց առաջիկա 5 տարում արտերկրից 5 հազար հայ ընտանիք Տավուշի մարզում վերաբնակեցնելու իր նպատակի մասին, սակայն այդ ծրագիրը լոկ խոստում մնաց:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՈՐՈՇՈՒՄ

ՓՈԽԱՏԵՂՈՒՄՆԵՐ՝ ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ

Ղեկավարվելով «Քրեակատարողական ծառայության մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 22-րդ հոդվածի 1-ին մասով, ինչպես նաեւ հիմք ընդունելով Քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գեներալ-մայոր Սերգեյ Ատոմյանի՝ 2023 թվականի փետրվարի 23-ի գրություններով ներկայացված առաջարկությունները՝ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարար Գրիգոր Մինասյանի հրամաններով՝ փոխատեղումներ են կատարվել Քրեակատարողական ծառայության համակարգում:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Մանուկ Արմենակի Պողոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Վանաձոր» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արսեն Բախշիի Արզումանյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Սեւան» քրեակատարողական հիմնարկի պետ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Սեւան» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Գեւորգ Ժուդոլֆի Հովհաննիսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ:

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Աբովյան» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Արմեն Վանիկի Մարտիրոսյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Գորիս» քրեակատարողական հիմնարկի պետ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Ռուբեն Էդուարդի Խալապյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ փոխադրման կարգով նշանակվել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմնարկի պետի պարտականությունների ժամանակավոր կատարումը հանձնարարվել է Քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի անվտանգության ապահովման բաժնի պետ, արդարադատության գնդապետ Խաչիկ Սիմոնի Հարությունյանին: Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության «Դատապարտյալների հիվանդանոց» քրեակատարողական հիմնարկի պետ, արդարադատության գնդապետ Աղասի Խաչիկի Խաչատրյանն ազատվել է զբաղեցրած պաշտոնից եւ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետ, արդարադատության գեներալ-մայոր Սերգեյ Ատոմյանի հրամանով նշանակվել ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության կենտրոնական մարմնի ուղեկցումների բաժնի պետի պաշտոնում:

ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ

Ի՞ՆՉ Է ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆ ԱՆԵԼՈՒ

Հակակոռուպցիոն կոմիտեում կստեղծվի կարգապահական հանձնաժողով: Armlur.am-ը տեղեկացավ, որ հանձնաժողովը բաղկացած է լինելու 8 անդամից:

Օրենքում կատարված փոփոխությամբ՝դրանում ներառվելու են Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալներից մեկը՝ կոմիտեի նախագահի որոշմամբ, հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող մեկ քննիչ, մեկ օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայող, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված մեկ դատախազ, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված մեկ ներկայացուցիչ, մեկ իրավաբան-գիտնական, վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի 2 ներկայացուցիչ:

Հանձնաժողովի անդամները նշանակվելու են 3 տարի ժամկետով: Միաժամանակ հարկ է նշել, որ պաշտոնավարման ժամկետների տեսանկյունից առանձնահատուկ կարգավորումներ են նախատեսվել հանձնաժողովի առաջին կազմի անդամների համար: Մասնավորապես, նախագծով սահմանվել է, որ հանձնաժողովի առաջին կազմում ներգրավվված՝ Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի տեղակալը, Մարդու իրավունքների պաշտպանի կողմից ներկայացված ներկայացուցիչը, իրավաբան-գիտնականը, վարչապետի առաջարկությամբ ներկայացված հակակոռուպցիոն ոլորտի քաղաքականության մշակումն իրականացնող մարմնի 2 ներկայացուցիչները պաշտոնավարում են 2, իսկ հակակոռուպցիոն կոմիտեի՝ վիճակահանությամբ ընտրվող քննիչը, օպերատիվ-հետախուզական ստորաբաժանման ծառայողը, ՀՀ գլխավոր դատախազության կողմից ներկայացված դատախազը՝ 1 տարի ժամկետով:

Նշենք նաեւ, որ նախագծով նախատեսվում է, որ հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման ժամկետը մեկ տարի է:

Նախագծով նաեւ հստակեցվում են կարգապահական ներգործության միջոցներ կիրառելու ընթացակարգերը. նախատեսվում է, որ կոմիտեի ծառայողի նկատմամբ իրականացվող ծառայողական քննությունն ունի երկու փուլ՝ նախնական ուսումնասիրություն եւ կարգապահական վարույթ:

Կարգապահական վարույթի իրականացման համար նախագծով առաջարկվում է սահմանել հստակ ժամկետներ:

Նախագծով նաեւ սահմանվել են երաշխիքներ կոմիտեի ծառայողների իրավունքների ապահովման տեսանկյունից: Նախատեսվում է, որ կոմիտեի ծառայողն իրավունք ունի բացատրություն տալու իր նկատմամբ հարուցված կարգապահական վարույթի առնչությամբ, ստանալ իրավաբանական օգնություն, այդ թվում՝ հանդես գալ ներկայացուցչի միջոցով:

Շահերի բախման հնարավոր դեպքերը կանխելու նպատակով նախագծով սահմանվում են այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում հանձնաժողովի անդամներին կարգելվի մասնակցել հանձնաժողովի գործունեությանը:

Միաժամանակ, նախագծով սահմանվում են հանձնաժողովի ձեւավորման ժամկետները, ինչպես նաեւ նախատեսվում են կարգավորումներ, որոնք կապահովեն կոմիտեի վարքագծի կանոնների ընդունումը եւ այլն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 3 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 43 ՃՏՊ. 57 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

««Ժողովուրդ» խմբագրություն» ՍՊԸ, 2022թ. տարեկան հաշվետվություն

ԵԿԱՄՈՒՏ

այդ թվում՝

թերթեր՝ 5 675 360 (հինգ միլիոն վեց հարյուր յոթանասուն հինգ հազար երեք հարյուր վաթսուն դրամ),

գովազդ՝ 31 817 417 (երեսուն մեկ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար չորս հարյուր տասնյոթ դրամ):

ԾԱԽՍԵՐ՝

այդ թվում՝

տպագրական ծախս՝6 608 500 (վեց միլիոն վեց հարյուր ութ հազար հինգ հարյուր դրամ),

աշխատավարձ՝ 29 450 294 (քսանինն միլիոն չորս հարյուր հիսուն հազար երկու հարյուր իննսուն չորս դրամ),

այլ ծախսեր՝4 785 561 (չորս միլիոն յոթ հարյուր ութսուն հինգ հազար հինգ հարյուր վաթսուն մեկ դրամ):

ՀԱՐԿԵՐ՝

եկամտահարկ՝ 5 732 192 (հինգ միլիոն յոթ հարյուր երեսուն երկու հազար հարյուր իննսուն երկու դրամ)

շրջ. հարկ՝ 1 675 998 (մեկ միլիոն վեց հարյուր յոթանասուն հինգ հազար ինը հարյուր իննսուն ութ դրամ),

սոց. վճար՝1 002 679 (մեկ միլիոն երկու հազար վեց հարյուր յոթանասուն ինը դրամ),

դրոշմանիշ՝ 465 000 (չորս հարյուր վաթսուն հինգ հազար):

ՏՈՒԳԱՆՎԵԼ ԵՆ 2–ՐԴ ԱՆԳԱՄ

Մրցակցության պաշտպանության հանձնաժողովը շարունակում է ուսումնասիրել արտասահմանից ՀՀ առաքման ծառայություններ մատուցող տնտեսավարող սուբյեկտների վարքագիծը:

Ուսումնասիրության արդյունքում «Հայփոստ» ՓԲԸ եւ ««Հայփոստ Յու Էս Էյ Քորպ» կորպորացիա» անձանց խմբի (Ber-Ber ծառայություն), «Վայլդբերրիզ» ՍՊԸ-ի եւ «Էյջ 2 Էյջ» ՍՊԸ-ի վերաբերյալ հարուցվել են վարույթներ՝ առաքումների ժամկետների առնչությամբ կատարված հրապարակումների միջոցով հասարակության մոլորեցման դրսեւորմամբ անբարեխիղճ մրցակցության հատկանիշներով: Արդյունքում Ber-Ber ծառայությունը եւս մեկ անգամ տուգանվել է:

«Էյջ 2 Էյջ» ՍՊԸ-ն ընդունել է իրեն վերագրվող իրավախախտման փաստը եւ միջնորդել կիրառել արագացված վարույթ:

«Վայլդբերրիզ» եւ «Էյջ 2 Էյջ» ՍՊԸ-ների վերաբերյալ հարուցված վարույթները դեռեւս շարունակվում են: Բացի այդ, հանձնաժողովի կողմից պահանջված տեղեկատվությունը չտրամադրելու համար «Վայլդբերրիզ» ՍՊԸ-ի նկատմամբ նշանակվել է 13 497 160 ՀՀ դրամի չափով տուգանք:

Հիշեցնենք, որ հանձնաժողովը 2022 թվականի նոյեմբերին ընդհանուր շուրջ 83 մլն դրամի տուգանք էր կիրառել «Գլոբալ շիփփինգ» ՍՊԸ-ի (Globbing), «Օնէքս» ՍՊԸ-ի (ONEX), «Հայփոստ» ՓԲԸ եւ ««Հայփոստ Յու Էս Էյ Քորպ» կորպորացիա» անձանց խմբի (Ber-Ber ծառայություն) նկատմամբ:

ՇՐՋԱՓԱԿՄԱՆ 78-ՐԴ ՕՐ

ԱՐՑԱԽՈՒՄ ԾՆՎԵԼ Է 300 ԵՐԵԽԱ

Արցախի առողջապահության նախարարության տվյալներով՝ Ադրբեջանի կողմից շրջափակման ընթացքում Արցախի ծննդատներում արդեն ծնվել է 300 երեխա:

Ադրբեջանական կողմի ահաբեկչական վարքագծի պատճառով նորածին երեխաներն ու նրանց մայրիկներն ամեն օր առերեսվում են լուրջ խնդիրների հետ՝ կապված մանկական սննդի, տակդիրների, դեղորայքի եւ այլ առաջին անհրաժեշտության պարագաների պակասի հետ:

Փետրվարի 24-ից 26-ը Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից 14 հիվանդ տեղափոխվել է Հայաստան:

17 բուժառու, որոնք պետական պատվերի շրջանակներում ուղեգրվել էին ՀՀ բուժում ստանալու համար, ուղեկցողների հետ վերադարձել են Արցախ:

Արցախից Հայաստան հիվանդների տեղափոխումը շարունակում է իրականացվել բացառապես Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ:

Փետրվարի 26-ի դրությամբ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի կողմից Արցախից Հայաստան է տեղափոխվել ընդհանուր 127 հիվանդ:

Արցախի ԱԳՆ-ն հայտարարություն է տարածել. ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի՝ Լաչինի միջանցքի բացման պահանջով որոշման վերաբերյալ հայտարարարության մեջ, որը տարածվել էր փետրվարի 24-ին, մասնավորապես ասված է. «Ողջունում ենք ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանի փետրվարի 22-ի որոշումը՝ Ադրբեջանի դեմ ժամանակավոր միջոց կիրառելու մասին, որը պարտավորեցնում է վերջինիս ձեռնարկել իր տրամադրության տակ եղած բոլոր միջոցները՝Լաչինի միջանցքով մարդկանց, տրանսպորտային միջոցների եւ բեռների անխոչընդոտ տեղաշարժը երկու ուղղություններով ապահովելու համար:

Կոչ ենք անում միջազգային հանրությանը գործուն միջոցներ ձեռնարկել՝ ապահովելու Ադրբեջանի կողմից ՄԱԿ-ի գլխավոր դատական մարմնի որոշման անհապաղ եւ անվերապահ իրականացումը: Միաժամանակ անհրաժեշտ ենք համարում, որ միջազգային մակարդակով համակարգված եւ հանգամանալից դիտարկվի Ադրբեջանի՝ Արցախի ժողովրդի իրավունքները զանգվածաբար ոտնահարող քաղաքականությունից արցախցիների իրավական պաշտպանության հարցը»:

Օրվա վիճակագրական թարմացումներ

2 երեխա գտնվում է մանկական հիվանդանոցի նորածնային եւ վերակենդանացման բաժանմունքներում:

6 չափահաս բուժառու գտնվում է վերակենդանացման բաժանմունքում, որոնցից 3-ը ծայրահեղ ծանր վիճակում է: Արդեն 300 երեխա ծնվել է շրջափակման մեջ:

Արցախի բոլոր բուժհաստատություններում պլանային վիրահատությունների դադարեցման պատճառով մոտ 730 քաղաքացի զրկվել է վիրահատվելու միջոցով առողջական խնդիրների լուծման հնարավորությունից:

Մինչ այսօր Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ եւ ուղեկցությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել 127 հիվանդ համապատասխան բուժում ստանալու համար:

755 տնտեսվարող սուբյեկտ (ընդհանուրի 17,7%-ը) շրջափակման պայմաններում աշխատելու անհնարինության պատճառով կասեցրել է իր գործունեությունը, իսկ մնացած տնտեսվարողները գործում են մասնակի ծավալով կամ պետական աջակցությամբ:

Ստեղծված տնտեսական բարդ իրավիճակի պատճառով նախնականորեն առնվազն 5,100 մարդ կորցրել է աշխատանքը եւ եկամտի աղբյուրը:

Ավելի քան 30,800 տոննա կենսական նշանակության ապրանքներ կմատակարարվեին Արցախ, եթե չլիներ շրջափակումը, որի ընթացքում Կարմիր խաչի միջազգային կոմիտեի եւ ՌԴ խաղաղապահ զորակազմի կողմից մատակարարվել է դրա միայն չնչին մասը:

Կարեւոր փաստեր

Շրջափակման մեկնարկից ի վեր աշխարհի բազմաթիվ երկրներ ու միջազգային կազմակերպություններ դատապարտել են Ադրբեջանի գործողությունները եւ կոչ արել վերացնել շրջափակումը: Հարցը քննարկվել է նաեւ ՄԱԿ-ի անվտանգության խորհրդում, Մարդու իրավունքների եվրոպական դատարանը պարտավորեցրել է Ադրբեջանին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ եւ բավարար միջոցները վերացնելու շրջափակումը: ՄԱԿ-ի արդարադատության միջազգային դատարանը (Հաագա) քննարկել է այն Ռասայական խտրականության վերացման կոմիտեի վարույթի շրջանակներում եւ պարտավորեցրել Ադրբեջանին ապահովել անխափան տեղաշարժը Լաչինի միջանցքով: Եվրոպական խորհրդարանում Արցախի շրջափակման հումանիտար հետեւանքների մասին բանաձեւ է ընդունվել:

«ԱԿԲԱ» ԲԱՆԿ

ՄՈՒՏՔ՝ ԹՎԱՅԻՆ ԱՇԽԱՐՀ

Դիանա Հակոբյանը PIXEL IT դպրոցի հիմնադիրն է, որտեղ ուսանողներին սովորեցնում են դիզայն, մարքեթինգ, ծրագրավորում, լեզուներ եւ ստեղծարար մտածողություն:

Դիանա Հակոբյանը նաեւ PIXEL IT ընկերության համահիմնադիրն է: Չորս տարի առաջ, երբ հիմնադրեց այս ընկերությունը, գրագետ եւ որակյալ կադրեր պատրաստելու նպատակով որոշեց նաեւ դպրոց բացել: Այսպես, PIXEL IT դպրոցը մեկնարկեց աշխատանքները, իսկ Դիանան՝դասավանդել: Նա հոգ է տանում յուրաքանչյուր ուսանողի մասին, կարեւորում ամեն մանրուք:

Դիանա Հակոբյանը շեշտում է, որ կանայք տեխնոլոգիական ոլորտը դարձնում են ավելի հոգատար:

Չորս տարի առաջ, երբ դպրոց ունենալու գաղափարը կար, անհրաժեշտ էր ֆինանսական գործընկեր, որը բիզնեսի կողքին կլիներ եւ կաջակցեր: «Ակբա» բանկը հավատաց գաղափարին եւ ձեռք մեկնեց նորաստեղծ բիզնեսին:

«Մեծացել եմ ուսուցիչների ընտանիքում, որտեղ տեսել եմ՝ տատիկս, մայրիկս ինչպես են դասավանդում: Կրթելու մշակույթը կար իմ ներսում, ու երեւի դա էր առաջին նպատակը, որ բացեմ դպրոց ու կարողանամ կրթել: PIXEL IT դպրոցի առաջին նպատակը որակյալ կրթությունն է, որն ապահովում ենք: Այս մասին ասում են նաեւ մեր ուսանողները, որ այստեղ սովորել ու ավարտել են: Մեր գործունեության սկզբնական փուլում, երբ սկսում էինք աշխատանքները, կարիք ունեինք այնպիսի գործընկերոջ, ով մեզ ձեռք կմեկներ ու կօգներ. դա հենց «Ակբա»-ն էր, որ ձեռք մեկնեց ու օգնեց»,- նշում է PIXEL IT դպրոցի հիմնադիր-տնօրեն Դիանա Հակոբյանը:

Այս տարիների ընթացքում դպրոցում սովորել են շուրջ 1500 ուսանողներ, որոնք աշխատում են SS տարբեր ընկերություններում: Դիանան իր հաջողության գլխավոր գրավականը համարում է աշխատասիրությունը:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

«ԹԱՏՐՈՆԻ ՄԱՐԴ»

ՄՆՋԱԽԱՂԻ ԹԱՏՐՈՆԸ՝ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓԱՌԱՏՈՆԻՆ

Երեւանի մնջախաղի պետական թատրոնը ռեժիսոր եւ դերասանուհի Նաիրա Եղիգարյանի «Դեպի ներս» մոնոներկայացմամբ եւ Արսեն Խաչատրյանի «Օֆլայն» պսիխոդրամայով կմասնակցի Չելյաբինսկում կայանալիք «Թատրոնի մարդ» (Человек театра) 10-րդ միջազգային փառատոնին: Թատրոնի գեղարվեստական ղեկավար Ժիրայր Դադայանը փառատոնին հրավիրված ժյուրիի անդամներից է:

Նրա խոսքով՝ «Դեպի ներս» եւ «Օֆլայն» ներկայացումներն արդիական են եւ հարմար են «փոքր չափերի թատրոն» ասված փառատոնի համար: Երկու բեմադրությունն էլ հանդիսատեսին կներկայացվեն մարտի 3-ին Չելյաբինսկի նոր գեղարվեստական թատրոնում: «Հաշվի առնելով այն հանգամանքը, որ մեր ներկայացրած բեմադրությունները երիտասարդական են եւ ժամանակակից լուծումներով, կարծում եմ, որ այնտեղ մեծ հետաքրքրությամբ կդիտվեն»,- նշում է Դադասյանը: «Դեպի ներս» ներկայացման մեջ կին գայլը չգիտի՝գայլից է արդյոք մարդու վերածվել, թե մարդուց գայլի. այնքան վաղուց է կորցրել սեփական դեմքը, որ մտածում է՝ արժանի չէ նույնիսկ իր բաժին լույսին: Ինքնամաքրման ճանապարհի որոնումները տարբեր են՝ մինչեւ իսկ սեփական դահիճը դառնալու փորձը: Պետք է գնալ «դեպի ներս», ամեն ինչ սկսել նորից, հաշտվել ինքդ քեզ հետ, բաց չթողնել քո լույսը եւ ապրել, ապրել ու ապրել: Ներկայացման նկարչական ձեւավորումը՝ ՀՀ վաստակավոր նկարիչ Անժելա Գալստյանի, Աղասի Մելքոնյանի: «Օֆլայն» պսիխոդրաման այն մասին է, թե որքան ենք հեռացել օֆլայն կյանքից եւ, անդադար օնլայն լինելով, չենք նկատում ամենակարեւորը՝մենք կորցրել ենք իրար զգալու հատկությունը: Ներկայացման հերոսները փորձում են ցույց տալ՝ որքան վտանգավոր կարող է լինել անկենդան շփման քառակուսու մեջ հայտնվելը, ու փնտրում են դեպի իրական կյանք եւ հույզեր տանող ելքեր: Ռեժիսորն Արսեն Խաչատրյանն է, ներկայացման մեջ զբաղված են Կարեն Խաչատրյանը, Լուիզա Մելքոնյանը, երաժշտական ձեւավորումը՝ Հայկ Կարոյի: Միջազգային փառատոնին թատրոնի մասնակցությանն աջակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

Team Telecom Armenia

ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՈՒՄՆ ԱՐՎԵԼ Է

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացվել է IELTS /International English Language Testing System/ պաշտոնական քննական կենտրոն, որը երկրորդն է ՀՀ-ում Բրիտանական խորհրդի կենտրոնից հետո:

Կենտրոնը ներառում է երկու քննական սենյակներ՝ 24 եւ 16 համակարգիչներով, որոնք տրամադրել է Team Telecom Armenia ընկերությունը:

Ողջունելով ներկաներին՝ ՀԱՊՀ ռեկտոր Գոռ Վարդանյանը նշեց. «Բրիտանական խորհրդի հետ երկարատեւ աշխատանքի արդյունքում այսօր

Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանում բացվում է IELTS պաշտոնական քննական կենտրոն: Այս քննական կենտրոնը

Պոլիտեխնիկական համալսարանի համար նոր հնարավորություն է ստեղծելու մասնագիտական եւ ուսանողական համայնքի՝անգլերեն լեզվի

գիտելիքների լավացման եւ խորացման առումով»:

Ռեկտորը իր շնորհակալանքի խոսքն ուղղեց նաեւ Team Telecom Armenia ընկերության համահիմնադիր եւ գլխավոր տնօրեն Հայկ

Եսայանին մշտապես բուհի կողքին լինելու համար:

«Բոլոր այն դեպքերում, երբ լինում է նոր նախաձեռնություն, որը հնարավորություն է ստեղծելու համալսարանում նոր արժեք գեներացնել՝ թե՛ կրթական, թե՛ նոր ֆինանսական հոսքեր ապահովելու իմաստով, Team Telecom Armenia ընկերությունը աջակցում է բուհին»,- նշեց Գոռ Վարդանյանը: Նա հույս հայտնեց, որ նմանօրինակ համագործակցությունները շարունակական բնույթ են կրելու:

IELTS թեստավորման համակարգը աշխարհում ամենատարածված անգլերենի թեստն է բարձրագույն կրթության եւ գլոբալ միգրացիայի համար:

Այն աշխարհում անգլերենի երկու հիմնական թեստերից մեկն է, մյուսը TOEFL-ն է: IELTS-ը գնահատում է անգլերենի բոլոր հմտությունները՝ կարդալ, գրել, լսել եւ խոսել:

Ըստ Team Telecom Armenia ընկերության գլխավոր տնօրեն Հայկ Եսայանի՝ տեխնիկական կրթություն ստանալու եւ զարգացում ապահովելու համար անգլերեն լեզու իմանալը պարտադիր, բայց ոչ բավարար պայման է: «Այսօր Պոլիտեխնիկը պատրաստ է բարձր որակավորման քննություններ ընդունել՝ տալով նոր մասնագիտական հաջողությունների հասնելու հնարավորություն: Մեզ համար առաջնահերթություն է կրթական ծրագրերին ու նախաձեռնություններին աջակցելը», - նշեց նա:

ՀՀ-ում Մեծ Բրիտանիայի արտակարգ եւ լիազոր դեսպան Ջոն Գալագերը նշեց, որ հպարտ է բրիտանական կրթական համակարգով, որն

աշխարհում լավագույններից է: «Անգլերենը ընդունված լեզու է աշխարհում, նաեւ՝ գիտության ոլորտում, այդ թվում՝ տեղեկատվական

տեխնոլոգիաների: Կենտրոնի բացմամբ մենք աջակցում ենք հայ ուսանողներին մուտք գործել բրիտանական կրթական համակարգ: Սա լավ

միջոց է աջակցել այն ուսանողներին, որոնք ուզում են զարգացնել լեզվական հմտությունները, օգտվել բրիտանական կրթական համակարգի

առավելություններից»,- նշեց դեսպանը:

ՀԱՊՀ-ի IELTS պաշտոնական քննական կենտրոնը կընդունի IELTS թեստ հանձնողների ամբողջ աշխարհից արդեն մարտ ամսին:

ԼՈՒՐԵՐ

ԵՐԿԱՐ ԴԱԴԱՐԻՑ ՀԵՏՈ

Դերասան, պրոդյուսեր Արմեն Պետրոսյանը (Մենչը) հայտնել, որ երկար դադարից հետո վերադառնում է կրկին հեռուստաթեթեր:

«Մարտի 14-ից սկսում եմ նկարահանել Երեւանում նոր՝ 16 մասից բաղկացած ֆիլմ: Երկար դադարից հետո ես էլի կնկարահանվեմ»,- գրել է պրոդյուսերը:

Հավելել է, որ ֆիլմը ցուցադրվելու է «Արմենիա» հեռուստաալիքով, այն եթերում կլինի ապրիլի վերջին:

«Դե՛ գուշակեք ֆիլմի անունը ու ովքեր են նկարահանվելու»,- վերջում հարցով է դիմել է Մենչն իր հետեւորդներին:

ՄԱՄՆԱԿՑԵԼՈՒ Է ՓԱՌԱՏՈՆԻՆ

Բեմադրող-խորեոգրաֆ Ռիմա Պիպոյանն իր «Բարեւ, Քիթի՛» բեմադրությամբ մասնակցել է փետրվարի 17-26-ն Արաբական Միացյալ Էմիություններում կայացած Ֆուջայրահի 10-րդ միջազգային մոնոդրամայի հեղինակավոր փառատոնին:

Նա մասնակցության հրավերը ստացել էր ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային թատերական ինստիտուտի գլխավոր տնօրեն Տոբիաս Բիակոնեի եւ ԱՄԷ արքայազնի կողմից:

Ներկայացումը մեծ հաջողություն է ունեցել եւ արժանացել մեծ գնահատանքի ինչպես հանդիսատեսի, այնպես էլ հրավիրված միջազգային մասնագետների կողմից:

Նշենք, որ «Բարեւ, Քիթի՛» ներկայացումը Ռիման բեմադրել է 2017թ.-ին Բեռլինի արվեստների ակադեմիայում, որն այնուհետեւ ներկայացրել է մի շարք Եվրոպական երկրներում:

Փառատոնն անցկացվում էր ԱՄԷ գերագույն խորհրդի եւ Ֆուջայրահի կառավարիչ Նորին Մեծություն, ԱՄԷ թագաժառանգ, Շեյխ Համադ Բին Մոհամմեդ Ալ Շարքիի բարձր հովանու ներքո:

ԳԼԽԱՎՈՐԵՑ ԿՈՐԵԱՅԻ ՀԱՎԱՔԱԿԱՆԸ

Ֆուտբոլի Գերմանիայի եւ ԱՄՆ-ի հավաքականների նախկին գլխավոր մարզիչ Յուրգեն Կլինսմանը նշանակվել է Հարավային Կորեայի հավաքականի գլխավոր մարզիչ: Պայմանագիրը նախատեսված է մինչեւ 2026թ. աշխարհի առաջնության ավարտը. հաղորդում է Հարավային Կորեայի ֆուտբոլի ֆեդերացիայի մամուլի ծառայությունը:

58-ամյա գերմանացի մասնագետի նախորդ թիմը եղել է Բեռլինի «Հերտան», որը լքել է 2020թ. փետրվարին: Կլինսմանը գլխավորել է նաեւ Մյունխենի «Բավարիան» 2008-2009 թվականներին:

Կլինսմանի ղեկավարությամբ առաջին հանդիպումը Հարավային Կորեայի հավաքականը կանցկացնի մարտի 24-ին՝ ընկերական խաղում մրցելով Կոլումբիայի թիմի հետ:

● *Մարտի 1-ին Երեւանի պատանի հանդիսատեսի թատրոնում տեղի կունենա «Փայտե մարդը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝1000-2000 դրամ: Սկիզբը՝ժամը 15:00-ին:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱԾՎԱԾ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. Ես գրառում եմ արել սոցցանցում, եւ այն արտատպել են: Դա օրինա՞կան է:

Լարիսա Վարդումյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե Ձեր կողմից կատարված գրառումը հանդիսանում է Ձեր ստեղծագործական մտքի արդյունք՝ բանաստեղծություն, պատմվածք, երգի բառեր կամ այլ ստեղծագործություն, ապա այն պաշտպանվում է հեղինակային իրավունքով: Ստեղծագործություն հանդիսացող գրառումը հրապարակելու պահից ծագում է դրա նկատմամբ անձի հեղինակային իրավունքը, եւ դրա օգտագործման համար յուրաքանչյուր այլ անձ պարտավոր է ստանալ Ձեր թույլտվությունը եւ համաձայնությունը՝ հղում կատարելով հեղինակին:

Եթե Ձեր գրառումը կամ հրապարակումը տարածվել է այլ օգտատերերի կողմից, ապա անհրաժեշտ է ?իմել Ձեր գրառումն օգտագործած անձին/անձանց՝ պահանջելով.

-հեռացնել գրառումը կամ

-ավելացնել հեղինակին կամ աղբյուրին հղումը:

ՀՀ արդարադատության նախարարության անձնական տվյալների պաշտպանության գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Բացի դա, հարկ է նշել, որ գրեթե բոլոր սոցցանցերում հնարավոր է կարգավորել հրապարակման լսարանը, այսինքն՝ հասանելի դարձնել հրապարակումը միայն ընկերների, ընկերների խմբի, կոնկրետ մարդկանց կամ առհասարակ բոլորի համար: Յուրաքանչյուր անձ ինքնուրույն կարող է որոշել, թե իր սոցիալական կայքում բացված այս կամ այն էջում կատարվող գրառումները կամ այլ հրապարակումները ովքեր, տեսնեն եւ ինչպիսի հասանելիություն ունենան: Ըստ այդմ, հրապարակման մասին իրենց կարծիքը հայտնելու կամ այն տարածելու ազատ հնարավորություն ունի ցանկացած անձ, որին այդ գրառումն ի սկզբանե հասանելի է դարձրել գրառում կատարած անձը, եւ դրա համար պարտավոր չէ նախապես թույլտվություն խնդրել:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Աշխատանքի ընթացքում ստացել եմ մարմնական վնասվածք: Ի՞նչ իրավունքներ ունեմ, ի՞նչ կարող եմ անել եւ ո՞ւմ դիմեմ:

Վարդան Դարբինյան (49 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մասնագիտական հիվանդության կամ աշխատանքային խեղման պատճառով աշխատունակությունը կորցրած աշխատողի աշխատատեղը եւ պաշտոնը պահպանվում են մինչեւ աշխատունակության վերականգնումը կամ հաշմանդամության կարգի որոշումը: Աշխատողի աշխատունակությունը չվերա-կանգնվելու եւ հաշմանդամության կարգը որոշվելու դեպքում գործատուն իրավունք ունի լուծել աշխա-տան-քային պայմանագիրը, սակայն գործատուն պարտավոր է հոգալ աշխատողի հիվանդանոցային այն ծախսերը, որոնք անմիջականորեն փոխկապված են աշխատանքի ընթացքում ստացած մարմնական վնասվածքի հետ:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այն դեպքում, երբ աշխատողի ստացած մարմնական վնասվածքները կապ չունեն աշխատանքի հետ, ապա ժամանակավոր անաշխատունակ դարձած աշխատողները պահպանում են իրենց աշխատատեղը եւ պաշտոնը ոչ ավելի, քան 120 օր անընդմեջ, կամ վերջին մեկ տարվա ընթացքում ոչ ավելի, քան 140 օր: Ժամանակավոր անաշխատունակության դեպքում աշխատողը պահպանում է նաեւ իր աշխատավարձը եւ իրավունք ունի այն ամեն ամիս ստանալու գործատուից, թեկուզեւ նա չի ներկայանում աշխատանքի:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

35 տարի առաջ՝ 1988թ. փետրվարի 27-29-ին, ադրբեջանական իշխանությունների հրահրմամբ եւ հանցավոր անգործության հետեւանքով Սումգայիթ քաղաքում տեղի ունեցան զանգվածային հայկական ջարդեր, որին զոհ գնացին հարյուրավոր հայեր, այդ թվում՝ երեխաներ, կանայք եւ ծերեր, իսկ հազարավորները բռնի տեղահանվեցին: Սումգայիթյան ջարդերի կապակցությամբ Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը միացել է հայերին՝ սգալով եւ տուրք մատուցելով 1988թ. Սումգայիթում զոհ գնացածների հիշատակին:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **27.02.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: